Արձանագրություն N 3

«ԿՄԲՀ-ԲՄԱՇՁԲ-19/35» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Բյուրեղավան

03 հուլիսի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Պողոսյան, Ս. Ղազարյան, Հ. Եղյան, Շ. Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Մարտիրոսյան

Բաց մրցույթ ընթացակարգի մասնակիցներին միաժամանակյա բանակցությունների **գործընթացի մասին**

(Դ. Դանիելյան)

Բյուրեղավան համայնքում ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2019 թվականի մայիսի 20-ին հայտարարվել է «ԿՄԲՀ-ԲՄԱՇՁԲ-19/35» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերը բացվել են 2019 թվականի հուլիսի 01-ին: Մրցույթի հայտ են ներկայացրել «Արամ-շին 2007» ՍՊԸ-ն և «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ-ն: Հրավերով նախատեսված աշխատանքները կատարելու համար վերոնշված երկու մասնակիցներն էլ ներկայացրել են նախահաշվային գնից բարձր գին, այդ պատճառով նիստը կասեցվել է և կողմերը հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների:Նիստին մինչ բանակցություններ սկսելը «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հարց բարձրացրեց, թե արդյոք չպետք է մերժվեր «Արամ-շին 2007» ՍՊԸ-ի հայտը, քանի որ նա մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), բայց մրցույթի հրավերով պահանջվող հավելվածները ներկայացրել է միայն «Արամ-շին 2007» ՍՊԸ կազմակերպությունից, իսկ բանկային երաշխիքը «Է՝Ն Շին» ՍՊԸ-ն: «Արամ-շին 2007» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց, որ իրենք ճիշտ են ներկայացրել, համաձայն համատեղ գործունեության պայմանագրի:
Կողմերի միջև հարցը դարձավ վիճարկելի և միաժամանակյա բանակցությունները չկայացան:

Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց.

1.ԿՄԲՀ-ԲՄԱՇՁԲ-19/35 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստը միաժամանակյա բանակցությունների կասեցնել, դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալ, թե արդյոք «Արամ-շին 2007» ՍՊԸ-ի հայտը մերժման ենթակա է, թե ոչ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Դանիելյան

Անդամներ՝ Լ. Պողոսյան

Հ. Եղյան

Ս. Ղազարյան

Շ. Ասատրյան

քարտուղար՝ Վ. Մարտիրոսյան